Համադրեք Եկեղեցու պատմությունը ձեր կյանքի հետ

Վարժություն Ա
ՔԱՐՈԶԵՔ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել է. «Հալածանքը չի կանգնեցրել ճշմարտության առաջընթացը» (*Եկեղեցու պատմություն*, 4.540): Տերը նախկինում կանչել է Տասներկու Առաքյալների Քվորումի շատ անդամների՝ ծառայելու արտասահմանյան միսիաներում: Չնայած հիվանդությանն ու դժվարությանը, այս վճռական տրամադրված եղբայրները հնազանդորեն լքեցին Նավուն, որպեսզի ծառայեն: Արդյունքում հազարավոր մարդիկ, հիմնականում Անգլիայից, վկայություն ստացան Աստծուց, միացան Եկեղեցուն և մեկնեցին Նավու: Նրանք մեծ ուժ դարձան Եկեղեցու համար:

Կարդացեք 1 Նեփի 3.7 և Վարդապետություն և Ուխտեր 3.1 հատվածները և մտածեք, թե ինչպես կարող են այս հատվածներն առնչվել միսիոներական աշխատանքի այս օրինակին:

Վարժություն Բ
ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ

Երբ Սրբերը կառուցում էին Նավուի տաճարը, մի քանի քույր նկատեցին, որ տաճարում աշխատող տղամարդկանցից շատերը չունեն համապատասխան կոշիկներ, տաբատներ և վերնաշապիկներ: Տիրոջ կողմից ոգեշնչված՝ նրանք կազմակերպեցին կանանց մի խումբ և սկսեցին միասին աշխատել, որպեսզի ապահովեն այդ հագուստները: Այդ ժամանակահատվածի նմանատիպ խմբերի նման նրանք էլ մշակեցին սահմանադրություն: Նրանք փաստաթուղթը ներկայացրին Ջոզեֆ Սմիթին՝ հաստատման համար:

> [Երբ] Ջոզեֆը [տեսավ դա,] ասաց, որ դա իր տեսակի մեջ լավագույն սահմանադրությունն է: «Սակայն սա այն չէ, ինչ դուք ուզում եք», - ասաց նա: «Ասեք քույրերին, որ նրանց զոհաբերությունն ընդունվում է Տիրոջ կողմից և նա ավելի լավ բան ունի նրանց համար: . . . Ես կանանց կկազմակերպեմ քահանայության ներքո՝ քահանայության օրինակով»: (*Սրբեր*, 1.448)

1842 թ. մարտի 17-ին Աստված ուղղորդեց Ջոզեֆ Սմիթին կազմակերպել Սփոփող Միությունը: Աստված այսօր շարունակում է ոգեշնչել Սփոփող Միության ղեկավարներին՝ ծառայելու և ամրացնելու Եկեղեցու անդամներին և շատ այլ մարդկանց:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 58.26–28 հատվածները՝ փնտրելով, թե այս հատվածներն ինչպես կարող են առնչվել ոգեշնչված կանանց, որոնց գործողությունները հանգեցրին Սփոփող Միության հիմնադրմանը:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_431-1